

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկի.
Տ է Լ է Ք օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Կ Ի Ր Գ Ր Ի Գ Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Նունէ Միքայէլեան Իգիթիանեան, Մարիամ Միքայէլեան Բուրգիկեան, Յովհաննէս և Դաւիթ Միքայէլեան և Նատալիա Ալեքանդրեան Շահաբանեաները, խորին վշտով յայտնում են առաջինները իրանց սիրելի և անմոռանալի մօր, իսկ վերջինը իր թանկագին սկեսուրի:

ՆԱՏԱԼԻԱ ՊԱՊԱՅԵԱՆ ԾԱՂԱՍԵԱՆԻ

մահը, խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին հինգշաբթի, ամսին 27-ին, առաւօտեան ժամի 10-ին, շնորհ բերել յուզարկաւորութեան հանդիսին, որը տեղի է ունենալու իր ընտանիքի Մեջնասարայեան փողոց № 18, Արաս-Արաստի հրապարակի մօտ դէպի Զիգրաչեան Ա. Եւսեպի և Աստուածածին եկեղեցին: Ամբիջը կատարվելու է չորեքշաբթի, ամսին 26-ին, երեկոյան ժամի 6-ին:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ՞ք սթափվելու.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Յ. Պաղէնիօզի Երկրաչարքից ձևավորման օգտին. Նամակ Եկատրինապոլից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՅԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ֆրանսիայից.

ՄԻԹԷ՞Ք ՉԼՔ ՍՈՒՓՎԵԼՈՒ

Մեր մի քանի անգամ խօսել ենք մեր եկեղեցական կալուածքների անստուգիտեան բարոյական մասին և առաջարկել ենք, որ հողերը իշխանութիւնը լուրջ միջոցներ ձեռք առնի կալուածքների կառավարութեան գործին տարւոյ կանոնադրելու և խելացի կազմակերպութիւն: Սակայն մինչև այժմ այդ կարևոր և անյետաձգելի գործը մի քայլ առաջ չէ գնացել և ամեն բան ընթանում է աւանդական կարգերով կամ, աւելի ուղիղն ասած՝ առանց որ և է ուրջ կարգերի:

Շուտով Անդրկովկասում պետք է մրցանքով հողային նոր հարկ, որ կօչվում է պետական գեմակի հարկ: Այդ հարկին պետք է ենթարկվեն բոլոր հողերը առանց բացառութեան և նրանց թուում է կեղեցական կալուածքների հողերը: Սթէ մի քանի ժամանակից յետոյ Անդրկովկասը արժանանայ ստանալու և տեղական ինքնավարութեան կամ զինամովի հիմնարկութիւնները, այն ժամանակ նա պետք է սահմանի նոր հողային հարկը անհրաժեշտ ծախքերը ապահովելու նպատակով:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿ ՅՐԱՆՍԻՍԻՅԻՑ

Պարիզ, յունվարի 4-ին

Միջոց կուր, աղիւծութիւն: Կուր ցոյցերով, դատարարութիւններով, գործադուլներով, հրապարակական շանթարակ ճանապարհով Ֆրանսիան խաղաղութիւն չէ սիրում: Պարիզը, անչէ՛ հրաբուխի պէս, փրփրում ու եռ է դալիս անդադար: 1789—93 սարսափելի թուականոնը թողել են իրանց գրոշմը ամբողջ յետագայ կեանքի վրա: Պարիզը երբէք չէ կարողանում թօթափել այդ նշանաւոր օրերի յիշատակը, երբ նա զորացրեց աշխարհը իր վիթխարի ցնցումներով... Մեծ անցքերի թովիչ տարածանքները զեռ և ս հնչվում են իւրաքանչիւր Ֆրանսիացու սկզբին, ցնկով նրա սիրտը մի սրբազան խանդավառութեամբ:

Այն յիշատակելի օրերից ի վեր Ֆրանսիան և մասնաւորապէս Պարիզը պահպանում է մի արտասովոր շղթային, հիւանդու գրութիւն: Այն օրերից յետոյ Պարիզը դարձաւ ամբողջ քաղաքակրթութիւն աշխարհի սիրտը: Ամեն մի խոչոր կատաստրօֆ, ամեն մի քաղաքական յեղաշրջում անմիջապէս արձագանք էր գտնում ուրիշ երկրներում, ամեն մի ցոյց կամ գրօցէս բեւեռում է Պարիզի վրա ամբողջ աշխար-

կալուածքներից տարեկան խոչոր տուրքեր: Սթէ ընդունենք, որ իւրաքանչիւր գեմատանին համար պէտք է վճարվի 10—13 կոպեկ, այն ժամանակ հազար գեմատան կալուածքին հարկաւոր կը լինի վճարել 100—130 ռուբլի, իսկ տան հազար գեմատանին համար 1000—1300 ռուբլի: Իսկ ինչ կը ն տալիս այժմ մեր եկեղեցական կալուածքները: Արքա՞ն գուտ արդիւնք է մտնում էջմիածնի գանձարանը:

Միթէ՞ք այժմ էլ չեն արթնանանայ մեր եկեղեցական կալուածքների զեկախարդները և չեն ձեռնարկի բարեփոխութեան մի շարք նպատակայարմար միջոցներ: Կան օն աւեր տնտեսութեան համար մեր վերե յիշած տուրքը չնչին դուրս է, որ կարելի է շատ հեշտութեամբ վճարել իսկ անկարգ և անհաշիւ անստուգիտեան համար նա իսկապէս մի ծանրութիւն է: Օտարութիւն է և գարմատի, որ մի այնպիսի ժամանակ, երբ մեր երկրում գրեցվում է հողի պահպանութիւն, երբ հողի կապալարմանը հասել է շատ բարձր գների, այդ ժամանակ հողի լայն տարածութիւններ մնում են մեռած կապտախնդր և նրանց սեփականատէր հիմնարկութիւնը, որ իր մեծածախս պիտոյքների կարող էր ապահովել իր կալուածքների հասոյթներից, ստիպված է անդադար դիմել ազգաբնակչութեան նուիրաւորութիւններին և ջերմեանդութեան նիւթական արտադրութեան:

Կարգի բերեցէք կալուածքները, որ աւելանան ձեր եկամուտները և կարողանաք արդիւնաւէտ գործերի համար դուրսնել ունենալ: Կարգի բերեցէք նրանց,

իւր ուղարկութիւնը: Շարունակ վերելայրում քաղաքական-հասարակական կարգերի, միջնարդութիւնների յաճախակի տապալումներ, կուսակցական կատաղի մրցակցութիւն, կուր, ընդհանուր ցասկոտութիւն ու անպահովութիւն—այդ ամենը վաղուց դարձել է Ֆրանսիական սօցիալական կեանքի հարազատ ու յարակալ յատկանիշը: Ֆրանսիացին խորապէս հաւատում է ցոյցերի, բռնի յեղաշրջումների ամենակարող ուժին: Ցեղական-ժառանգական պայմանները զօտել են նրան գերազանցապէս յեղաշրջող մի բնաւորութեամբ. նա զերբարգիւն է, տաքարեւն, զայրացկոտ: Նա զերբութեամբ յափշտակվում է ընդհանուր, համամարդկային գաղափարներով: Նրա ոգեւորութիւնը գաղափարի համար համարում է մոլորանդութեան, թող թէ նա յաճախ չափազանց իղէպելու է, կրագող... Նա ըմբոստանում է ամեն կարգի հեղինակութեան դէմ, սակայն—տարօրինակ բան—նա միաժամանակ սիրում է հեղինակութիւն: Ոչ մի ուրիշ տեղ, թերեւս, այնքան մոլորութեամբ չէ պայթել կուր ժողովրդի եւ իր դարաւոր թշնամիների միջև, ինչպէս Ֆրանսիայում: Բայց և ոչ մի տեղ, թերեւս, այնքան զերբութեամբ երկու հակամարտ բանակների միջև, ինչպէս դարձեալ Ֆրանսիայում: Բնորոշ է, որ նոյն իսկ անցեալ դարի վերջերս, երբ Ֆրանսիան վճռել էր տապալել հիւանդուր բոլոր հեղինակութիւնները նա այդ նպատակին համեմատ համար մարմնացրել

որպէս զի կարողանաք հեշտութեամբ վճարել այն տուրքերը, որոնք պէտք է պահանջվեն այդ հողերից: Կարգի բերեցէք, որպէս զի ցոյց տաք, որ դուք խելացի անտես էք և բարեխիղճ հողատէր, որ դուք չէք խանդարում կուլտուրական պահանջներին և մշտական հոգսով էք հողի արդիւնաբերութեան զարգացման մասին: Վերջապէս կարգի բերեցէք կալուածքները, որպէս զի մի օր, երբ դուք թողնելու լինեք նրանց, հանդէս բերեք մի ամբողջ և գեղեցիկ կազմակերպված հարստութիւն, որի վրա գործ են գրվել աշխատանք և հմուտութիւն:

Միթէ՞ք դարձեալ պէտք է շարունակվի հինը: Միթէ՞ք քարերը չեն աղաղակի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Կովկասեան ազգերի մէջ համարաչափեան, եղբայրացկոտեան գաղափար տարածելու գործը, որին երկար ժամանակներից ի վեր նուիրված էին մեր երկրի լաւագոյն գործիչները, վերջին մի քանի տարիներում սաստիկ վտանգված էր: Նորից այն հանգամանքի, որ խաւար հոսանքներ մասն տեղական ինտելիգենցիայի մէջ և չօլինիստութիւնը բաւական կուրացրեց ծողովրդի առաջնորդներին, հաստատելով այն թշուառ մոլորութիւնը թէ հարեւաւոր էր հարեւանին ոչինչ լուրութիւն չու պիտի ցնակայ, եթէ կամենում է, որ ինքը լու ապրէ և երջանիկ լինի: Այդ աւերիչ ու խաւարաբէն հոսանքի հետ քաջ մեք չէինք չէինք ինտելիգենտ դասակարգի մի մասը Հարկաւոր չէ, որ մենք նորից ծանօթացնենք մեր ընթերցողներին վրայի չօլինիստների կատաղի անհաշտութեան հետ. «Մշակ» անցեալ տարվայ համարներում մենք մի շարք յօդուածներ մէջ քննեցինք վրայ հրապարակախօսութեանը, հասկացողութիւնները, և ընթերցող տեսաւ թէ որքան երեխայութիւն, որքան ծիծաղելի անհեթեթութիւն և լօղիկայի վայրենութիւն է մտցրել «ժողովրդի աղի» մէջ գրօշանոց չօլինիստութիւնը, այդ կերպաւր, որ լափում է ամեն մի առողջ օրգանից: Բայց վրայցիներ մէջ կային և այնպիսի ազնիւ մը-սամոյներ, որոնց համար համերաչափեան

լուսատու գաղափարը այդքան ատելի և արհամարհելի արութիւն չէր: Այդպիսի գործիչներից մէկի մահը այս քանի օրերը ուրաց վրայ հասարակութիւնը: Դա Գէօրգի Մէրէթէլին է, մի գրական և հասարակական ազնիւ գործիչ, որ անհաշտութեան խուար տիրապետութեան ժամանակ էլ հնչեցնում էր եղբայրութեան խօսքը և հենց այդ պատճառով սիրելի չէր չօլինիստական շրջաններին: Երբ մեռաւ այդ մարդը, երբ հասարակութիւնը սուսաւ թէ որքան ցաւալի կորուստ է իր առաջադիմութեան համար աշխատողների շարքում և զոյգացած այդ բացը, այդ ժամանակ հազարաւոր մարդիկ շապակցին իրանց խորին համակրութիւնը յայտնելու անհնչացած դիակին, իրանց մարդկային պարտականութիւնը կատարելու հասարակաց կրակատարի վերաբերմամբ: Մեր տեղական դժգոյն կեանքի մէջ այդպիսի հասարակական երեւոյթներն էլ միութեամբ են, վերին աստիճանի խրախուսական, թէեւ, աւստ, նրանք արտաշայտութիւն են գտնում գերեզմանների վրա, տուր յուզարկաւորութիւնների ժամանակ: Ի հարկէ, Գէօրգի Մէրէթէլին իր մայրենի գրականութեան շատ ծառայողութիւններ է մատուցել և այդ պատճառով էլ այնքան շատ էին համակրութեան ցոյցերը. մարտնչող զինուորի յաղթանակը մահից յետոյ է գալիս—այսպէս է աշխարհի կարգը. եւ անպիսի բազմութիւնը, որ ներկայ էր յուզարկաւորութեան, իր անկեղծ ցաւակցութեամբ, իր մեծաբաններով հաստատում էր գործիչի գաղափարական կուրը, ընդունում էր այդ կուր փրկարար, ազնիւ սկզբունքները, մի խօսքով վճռում էր, որ հանգուցեալի սրբութիւնը սրբոցը ազգի համար էլ պաշտելի է: Եւ որովհետեւ հանգուցեալը դաւանանքների մէջ ազգայնութիւնների համերաչափութիւնը անկիւնաքար էր կառուում, ուստի կարող ենք ասել, որ վրայ հասարակութիւնը մի փառաւոր ապացոյց բերեց թաղման օրը, որ մարդատեսութիւնը, անհամբերողութիւնը, առանձին անհատներին կարող է վարակել իսկ մի ամբողջ ժողովրդին, մի ազգի հաւաքական բազմութեան—երբէք Այդ գեղեցիկ հանգամանքը չնչովից և ոչ մի ձեռքերի մէջ, որոնք արտասանվեցան հանգուցեալի գերեզմանի վրա: Այդ օրը վրայ ինտելիգենցիայի այն մասը, որ հաւատարիմ է մնացել համարաչափային վեհ իղէպելներին, շարունակում էր Մէրէթէլինի կուրը նրա հակառակորդների դէմ: «Կլավ» շարաթաթիթի մէջ տպված

րիդի բոլոր թաղերը—այսօր նա սկզբունքով մերժում է արեան ճանապարհը, որպէս հնացած, վնասակար, յաճախ իր հետեւանքներով նոյն իսկ յետադէմ միջոց, և նախընտրում է խաղաղ առաջադիմութիւնը:

Ընդհակառակը՝ այն տարրերը, որոնք մի ժամանակ կանոնաւոր գործառնակներով էին արշաւում բողբոջ ընդհանրութեան դէմ և բանների ու կախաղանների տարախներով ձգտում խաղաղ այդ բողբոջը, այն տարրերը, որոնք կարգ էին մտնում և հրացանազարկ անում ըմբոստներին յանուն տիրող ուժի իր անբնաբարի լիութեան—այսօր այդ նոյն տարրերն են, որ դիմում են երբեմն իրանցից հալածված անօրինական միջոցներին. նիւթում են դատարարութիւններ և երբ ժամանակակից արդարադատութիւնը հիմնված մի և նոյն կարգապահութեան սկզբունքի վրա, չուրով մի և նոյն անբնաբարի լիութեան տեսակետից դատապարտում է հակահանրապետական դատազրկներին—տեսէք ինչպիսի վայնաստուն է բարձրանում յանցաւորների բանակում. հանրապետութիւնը բռնակալ է, մահ հանրապետութեան... Ովքեր են դրանք.— անանուն մի կուսակցութիւն, ինչպէս նորբախկեց նրանց մի Բուրժուա իր հրապարակական ճառի մէջ. արքայականների, հակասեմիտների, կեղծ—հարկանակներին մի գարշիլ խմբը, մի կուսակցութիւն, որ յայտնի չէ, թէ ինչ է ուզում և որ միայն բողբոջ հնարաւոր

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

24 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Գիտութիւնների ակադեմիայի շնորհիւ մէջ Մեծ Խաչան Կոնստանտին Կոնստանտինովիչ բացեց օգիտելի յարմարների առաջին ժողովը...

«Daily Telegraph»-ին հաղորդում են, թէ Լէզի-Սմիթի ամբարձուցիչը թէև չարուհակվում է, բայց չնչին վնաս է պատճառում...

«Standard»-ին հետագրում են Դուրանից, թէ տեղական լրագրի հրատարակութիւնը դարձրեցրած է կապիտան Պրեսի-Սկոտի կարգադրութեամբ մի յօդուածի համար...

Կիրակոսեայ լրագրների առանձին յաւելուածի մէջ հաղորդում է Դուրանից, թէ Բուլքերն անցել է Տուգիւս գետը յունվարի 21-ի գիշերը...

«Politische Correspondenz» լրագրի թղթակիցը գրում է 4. Պոլսից. «Թիւրքիայի հետաքննարկողները կարծում են, որ Անգլիայի վերջնական պարտութիւնը...

«North American Review» ամսագրի յունվարի ամսագրում, որ գլխավորապէս նուիրված է անուր-տարանվազան պատերազմին...

Միացեալ-Նահանգների գնահատան քաղաքներում երկէ ժողովներ էին նշանակված անգլիական քաղաքականութեան դէմ բողոքելու...

Բուֆֆալոյում «Բիւրոյի» ղեկավարութեան ղեկավար Քլեյնը Բուրբը Հարաւային Աֆրիկայի պատերազմն անուանեց ամենամարդաբար ամենամարդաբար ամենամարդաբար...

Իսթոնգիւմում երեք հարիւր անձերից կազմված ժողովում, որ հրաւիրված էր բռնադատելու համար իսթոնգիւմում համարված զանազան համար, ճանաչելու իրենց իրենց...

Ներկայացումից յետոյ կարգադրվեցին ոտանաւորները: Չուտ արդիւնքը դեռ եւս յայտնի չէ, որի մի մասը, ինչպէս վերեւում յիշեցինք, պէտք է յատկացվի յօդուած երգեցիկ խմբի, սակայն աւելի բարեք կը լինէր, եթէ այդ գումարն ուղարկվէր Ախալքալաքի տառապաններին, որովհետեւ տեղիս եկեղեցիներն այնքան ապահով են, որ կարող են լրացնել զոհանջի խմբի պահանջները: Սուրբ «Աւետիս» էլ մանկաւ եւ հաւաքեց 216 բուլքի, որից 100 բուլքակիւր եւ աղէտին ենթարկվածներին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«National Zeitung» լրագրի թղթակիցը կալիֆորնից գրում է հետևեալը. «Յուզմունքը երկրպագան բարձր կարգի շրջաններում հեղափոխութեան սաստկանում է. Անգլիացիների տիրապետութիւնից վերջնականապէս ազատվելու մասին դեռ ոչ ոք չէ մտածում, այնու ամենայնիւ այժմեան շարժման գլխավոր նպատակը կայանում է նրանում, որ Եգիպտոսը վերադարձնեն եգիպտացիներին եւ նորից ներթափանց սուլթանի գերիշխանութեանը: Այսպէս ուրեմն այս շարժումը կարող է ծառայել որպէս նախապատրաստութիւն ապագայ պատերազմութեան: Անգլիացիների պարտութիւնները Հարաւային Աֆրիկայում եւ նրանց անհմուտութիւնը պատերազմական արուեստի մէջ քաջակերտ ազգացուցիչ են գործում եգիպտացիներին վրա: Բացի դրանից եգիպտացիները համոզված են, որ Անգլիան ստիպված պէտք է լինի դուրս հանել Եգիպտոսից իր ամենալաւ զօրքերը եւ դուրս թողնել Կալիֆորնի, Ալեքսանդրիայում եւ Սուսիում գործընթացը բերդապահ զօրքեր միայն, որոնց հետ հետ է հաշի տեսնել Յամանիսի դէպք, աւելացնում է թղթակիցը, այդ շարժումը կը ստիպէ անգլիացիներին չը հանել իրանց զօրքերը Եգիպտոսից, որովհետեւ նրանք գտնում են իրանց գրութեան անհաստատութիւնը»:

«Politische Correspondenz» լրագրի թղթակիցը գրում է 4. Պոլսից. «Թիւրքիայի հետաքննարկողները կարծում են, որ Անգլիայի վերջնական պարտութիւնը Հարաւային Աֆրիկայում քաղաքական աշխարհի վրա այնպիսի ազդեցութիւն կունենայ, որ ամենեւին օգտուէտ չի լինի Թիւրքիայի շահերին: Չը նայելով շատ անգամ կրկնված պնդումներին թէ Անգլիայի հակառակորդները դիտաւորութեան չունեն օգտուելու նրա այժմեան ծանր դրութիւնից, այդ գործիչները շատ հաւանական են համարում, որ Անգլիայի թուլացման ընկալան հետեւանքը կը լինի աւելի կանաչուն գործունէութիւն հակառակորդ պետութիւնների կողմից գնահատան կէտերում, ի միջի այլոց եւ Թիւրքիայում, ի վնաս, ի հարկէ, Թիւրքիային»:

«North American Review» ամսագրի յունվարի ամսագրում, որ գլխավորապէս նուիրված է անուր-տարանվազան պատերազմին, յօդուած Գրեյի, դոկտոր Լէյքի եւ պրոֆեսոր Հանս Գիլբերթի յօդուածների հետ միասին տպագրված է նաեւ Վալդմար Գրայտերի յօդուածն այդ պատերազմի մասին, որի մէջ, ի միջի այլոց, ասված է. «Ընդհանրապէս Թիւրքիայի քաղաքականութիւնը Տրանսպարանում, ստուծ է պ. Գրայտերի, Անգլիայի կողմից քաղաքականութեան ցոյց տուած կոսկածիկ ծառայութիւնների աչքի ընկնող օրինակներ են: Թիւրքիայի տիրապետութիւնների միջով դէպք իրապէսում սուլթանների հետ: Մի կողմից նա գործակցում էր Թիւրքիային նրա ինքնուսուան քաղաքականութեան մէջ—սորկայնելու եւ կոտորելու կայսրութեան քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, միւս կողմից Եւրոպայի արդար գայրոյթները գրգռում էր Թիւրքերի դէմ եւ այսպիսով Թիւրքերին պահում էր իր բռն մէջում, ի հարկէ, իրանք էր նրանցից այն ամենը, ինչ որ միայն հարաւոր էր իսկիւ Հայերի, կրիստոնեայների, եգիպտացիների եւ սլաւոնների տանջանքները իրանց շահուէտ բաժինը տուին Անգլիային: Այն ինչքերը, որին հետագայում, այս դէպքում անգլիական քաղաքագէտները, կայանում էր նրանում, որ օսմանան պետութիւնը պաշտպանին հեւտիային եկտորներին եւ այսպիսով հետաքննան ամեն մի արքայի կիւրոսը, Եգիպտոսը եւ Արաբիան յափշտակելու համար, որոնց տիրապետութիւնը տէր կը դարձնէր Անգլիային Պարսից ծոցի եւ ամբողջ Հնդկական ովկիանոսի: «Study the maps», խորհուրդ էր տալիս Սօլսբերի իր հայրենակիցներին Ուսումնասիրեցե՛ք քարտեզները, բացակայում է պ. Գրայտերի, եթէ դուք կանգնուած եք ճիշդ գաղափար կազմել Անգլիայի դիտաւորութիւնների մասին: Չէ՞միտքը զարդապատկերները Տրանսպարանում, որին հակառակութիւն է տուել Սօլսբերիի կարծիքը, ուսկիցանում է Անգլիայի դերը Հնդկական ովկիանոսում, մոտեցնում է նրան Հնդկաստանին, Պարսից ծոցին, Հեռաւոր Արեւելքին, մի խօսքով դա մի պատասխան է Գրայտերի պայմանական գործունէութեանը եւ Միացեալ-Նահանգներին, որ տիրեց Յիբրիպիան կղզիներին»:

համար: Արդէն կարգադրված է գործադրել այդ կանոնները:

Մայրաքաղաքի կառավարչական շրջաններում հարց է յարուցված փոքր ինչ ընդլայնել հրէաների մշտական բնակութեան սահմանագիծը: Այդ առաջարկը պատճառարանով է ներանույլ, որ արեւմտեան նահանգներում հրէաները չափազանց խիտ են բնակեցրած:

Թիֆլիսում պակասել է մտացու կենդանիների թիւը, որ սովորական ժամանակ լինում էր: Քաղաքային վարչութեան մէջ գործող յատուկ յանձնաժողովը նորից փորձեր արեց գնելու կենդանիներ, մորթել նրանց եւ ստուգել մահ գինը: Փորձը ցոյց տուեց, որ արդարեւ միայն թխնոց է նստում մազործներին: Ուստի որոշեց թէ ոչխարի եւ թէ մեծ տաւարի մահ գինը բարձրացնել մինչեւ 11 կոպէկ ֆունտը:

«С.-П. Вѣд.» լրագրի հաղորդում է, թէ ակադեմիկոս Պիլյուրի պետական արխիւի թղթերում գտել է Կայսրուհի Եկատերինա II-ի գրական երկերի մի մեծ քանակութիւն, որ մինչեւ այժմ անյայտ էր գրականութեան պատմագիրներին: Նոր գտած նրեւերը, լրագրի ասելով, պարունակում են իրանց մէջ հինգ հատ լիովին վերջացրած թատերական պիեսներ, եւ վեց հատուածներ. նրանք մեծ մասամբ ինքնուրույն գրուածքներ են, բայց կան նաեւ երեք «ազատ փոխադրութիւններ» Շէքսպիրից եւ կարեւորների, Նոր գտած նրեւերը գրված են մասամբ իրան Կայսրուհու եւ մասամբ ուրիշների ձեռքով:

Թիֆլիսի բէալական դպրոցի տարեկան հանդէպի ժամանակ, որ տեղի ունեցաւ յունվարի 23-ին, գիտութիւնների մէջ ցոյց տուած առաջադիմութեան եւ վարքի համար պարգևներ ստացան հետեւեալ հայ աշակերտները.— I կարգի պարգև.— Աւագան Սեդրակ, II կարգի պարգև.— Արեւան Թովմաս, Ազատեան Արմենակ, Բեռլիան Լեւոն, Միլիք-Ալլահալիքզեան Գրիգոր, Ալունցեան Արաէն, Ղօնդախեան Անդրօնի եւ Տէր-Բարսեղեան Գէորգ:

Ստացանք. 1) Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան 161-րդ հրատարակութիւնը.— I եւ II Տօմոսի «Մանկութիւն եւ պատանեկութիւն», թարգմ. Պ. Պ. ի: Գրքը բաղկացած է 274 երեսից: Գինն է 1 ռուբլի: 2) Գէորգի Տոմարի «Самочитель русской орфографии, тетради I и II. Իւրաքանչիւր տետրի գինն է 10 կոպ. Դա մի ձեռնարկ է, որի նպատակն է վարժեցնել ուսու լեզուի ուղղագրութեան մէջ:

ՆՈՒՆՈՒՅԾ մեզ հաղորդում են. «Այստեղ լուր տարածվեց, թէ նշանաւոր աւազակ Ճանկա, որ այնքան սարսափ էր տարածել մեր շրջակայքում, ձերբակալված է պրիսոնով Սասապուրով ձեռքով:

ՂԱԶԱՆԻԾ մեզ գրում են. «Մեր գաւառում երեւեցած հանքերը սկսել են ուշագրութիւն գրաւել: Սեւ քարի եւ Սուրճիկի մարգանցի հանքերն արդէն գնել են պ. Ա. Մէլիք-Ազարեան եւ ընկ. »:

ԵՍԱՍՏԻՑԻԾ, յունվարի 18-ից, մեզ գրում են, «Երէկ հողին յանձնեցին վաղամեակի երեխա արդ բժիկի Դեղիմանեանին: Յուզարիկոս Երաւիրելու եւ ասելու թէ չեն ճանաչում բուրբ ծխականներին, որովհետեւ կայ ծխական ցուցակ եւ կայ մի անձնաւորութիւն, որ բոլոր ծխականներին ճանաչում է. այդ ծխատէր քահանան է, որին երէցիկը այդպիսի գէպքեր կարգադրել ժողովի մասին, իսկ եթէ կը հրաւիրի միայն իր ծանօթներին, այդպիսի ժողովը կը լինի ոչ թէ ծխական, այլ ծանօթների ժողով: որ կարող է հրաւիրել իր սանը եւ ոչ եկեղեցուս:

ԱՐՄԱՒԻՐԻԾ մեզ գրում են. «Հայ սիրողները, ամսիս 12-ին, հասարակական կուրում խաղաքին «Սիւլա հայի» կօմիտիան, յօդուած ուսու ազգաւ հասարակութեան եւ հայ երգեցիկ խմբի կարծում էինք, որ այդ նպատակը կը գրած ժողովրդի ստուար մասը, բայց, սաւրաբար, թատրոնը կիսով չափ դատարկ մնաց: Կօմիտիան միանգամայն եւ անյարմար եւ անբաւականացողիչ էր, որովհետեւ մեզ մօտ շատերը հայերէն բնաւ չեն հասկանում, մի քանիներն էլ չառ թէ՛ կային եւ ուսները Սիրիկներն էլ, որոնց մեծ մասը գործակաւորներն էին, անկարող էին այնպէս տանել կղզիները, որ տպաւորութիւն թողնէր:

կամայ հարց է ծագում մեր մէջ.— ուր են մեր միւս երգիչները: Մեր մէջ 80-ական թվականներից սկսած երեւան են գալիս երիտասարդներ եւ օրիորդներ, դնում են արտասանան եւ ուսաց մայրաքաղաքները ձայները մշակելու: նրանց թիւն աժմ այնքան է եւ նրանք իրանց մէջ ունեն այնպիսի ոյժեր, որ կարելի է մի պատկանելի օպերային խումբ կազմել եւ այդպիսով սկիզբ դնել հայկական օպերայի: Այդպիսի մի փոքրիկ փորձ կատարեցին 1892 թ-ին Բաղուամ Երզնկեան Մատթեան, Ներկայացրին «Փառաւոր» հայերէն լեզուով, որը բաւական լաւ անցաւ:

Դա, ի հարկէ, մի երազ է, որի իրականանալը ցանկալի էր. դրա համար հարկաւոր է մի մեկնասա Մամոնտով, որի սպասելը մեր մէջ մի ցնորք է: Ահա 40 տարի է ունենք բնւ, ներկայումս նրա լաւ ոյժերը խմբված են մեր ամենահարուստ քաղաքում եւ, ինչպէս երեւում է, ջանքեր են գործ դրվում հետաքրքրել հասարակութիւնը նորամտ պիեսներով, եւ ի՜նչ, երբ վերցնես «Մշակի» համարը, աչքի է ընկնում յարգելի Բէյեհեղէանի գնադատը հասարակութեան անտարբերութեան դէմ:

Մեզ համեմատում են հրէաների հետ. որքան ճիշդ էր ցանկալի է այդ համեմատութիւնը՝ դրա մասին չենք խօսում. բայց մի բանում շատ ցանկալի էր նմանվել նրանց՝ այդ է սէրը դէպի երաժշտութիւնը եւ բնւր: Որքան տոբիթ ենք ունեցել այցելել այստեղի ուսաց թատրոնը՝ միտ 3/4 մասը կազմում են հրէաները: այստեղ քաղաքում ձու, միքի, հաց ծախող հրէայ կանանց կարող էք տեսնել թատրոնում: Այլ եւս չենք խօսում, երբ գալիս է Սպիլիակովիտու կամ մի այլ հրէական խումբ. նրանց պիեսները, որոնց արժէքը մեծ մասամբ անոված է հին կոսակոթիւններից, աւելի շուտ օգէտք եւ օգէտէտուս կարելի է անուանել, քան դրամա: Ուրիշ կերպ էլ չէ կարող լինել. մինչդեռ նրանք մանկութիւնից իրանց լսողութիւնը կրթում են սինագոգայում եւ քաղաքական հանձնարների ներկայութիւններով եւ ներդրումակ երգեցողութեամբ, մենք չարունակում ենք լսել մեր եկեղեցիներում մեր տիրացուների անախորժ ձայնը:

Յով. Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 24-ին
Յունվարի 23-ին, կիրակի օր, Թիֆլիսի Տափի-Թաղի Գանդիանց ս. Գեորգ եկեղեցում նոյն եկեղեցու նորնախի երէցիկի պ. Ա. Վարդապետանի հրաւերով կայացաւ ծխականների ժողով, որին նախագահում էր թեմիս օրագան անապարդը: Ժողովը վարչակազմով եկեղեցու շինութեան մակարդակի եւ նոյն շինութեան մասնաժողովի անդամ ճարտարագետ պ. Ն. Գրիգորեանի գրաւոր կարծիքի քննութեամբ, որովց շինութիւնը սկսել եւ շարունակել հաստատված մակարդակի համաձայն:

Ժողովի վերջը, երբ արձանագրութեան ստորագրութիւնը շարունակվում էր, զարմանքով դիմեցի պ. երէցիկին, ստեղծել էլ շատ եւ գործանում, որ իմ ծխականներից ոչ միքը ներկայ չէ ժողովին, երեւի չէք հրաւիրել: Նա պատասխանեց.— Ըստի եւ ամենեւին չեն գործանում, որտեղից կարող էի հրաւիրել քո ծխականներին, քանի որ ես չեմ ճանաչում նրանց, եւ հրաւիրել եմ նրանց, որոնց անձանք ճանաչում եմ»:

Կրկին զարմանքս յայտնելով, հրապարակով բողոքում եմ երէցիկին այդ վարմունքի դէմ: Երէցիկը, որն ընտրվում է բոլոր ծխականների համար, իրաւունք չունի իր ծանօթներին հրաւիրելու եւ ասելու թէ չեն ճանաչում բուրբ ծխականներին, որովհետեւ կայ ծխական ցուցակ եւ կայ մի անձնաւորութիւն, որ բոլոր ծխականներին ճանաչում է. այդ ծխատէր քահանան է, որին երէցիկը այդպիսի գէպքեր կարգադրել ժողովի մասին, իսկ եթէ կը հրաւիրի միայն իր ծանօթներին, այդպիսի ժողովը կը լինի ոչ թէ ծխական, այլ ծանօթների ժողով: որ կարող է հրաւիրել իր սանը եւ ոչ եկեղեցուս:

Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, չորեքշաբթի, յունվարի 26-ին, տեղի կունենայ երկրաշարժից վնասվածներին օգնող Թիֆլիսի գլխաւոր մասնաժողովի նիստը, նահանգապետ Ի. Սիւլիանի նախագահութեամբ:

«Кавказъ» լրագրին հաղորդում են, թէ ժողովրդական լուսաւորութեան միջնադպրոցները նոր կանոններ է հաստատել Թիֆլիսի Յովհաննէս-Մարիամեան օրիորդաց ուսումնաքանի:

Մ. Յ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵՆԵՐ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանգչալ)

ա մ ե ն օ Ր, բ ա ց ի կ ի ր ա կ ի օ Ր Ե Ր Ի ց:

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգենի—11-12 ժ. վերաբուժու-

թեան, վերականգնողական և միզասեռ հիւանդ.

Կ. Մ. Քիլոպանի—9-10 ժ. աչքի, ներքին և

նեարդային 5.

Ջ. Բ. Բարանասանց—11-12 ժ. կանանց և երե-

կայոց հիւանդ.

Բ. Տ. Պրոսանովից—12-1 ժ. սկանչի, կոկորդի,

քթի և կրծքի 5.

Ս. Պ. Կարապետանց—1 1/2 ժ. ներքին և երե-

կայոց 5.

Ս. Գ. Գուրկո—1 1/2-2 ժ. ներքին 5.

Ե Ր Ե Վ Ո Տ Ե Ր Ը

Բ. Տ. Պրոսանովից—5-6 ժ.

Ս. Ն. Շալիովսկի—6-7 ժ. ներքին (կեղ-

տարածութիւն), վերականգնողական և մորթի 5.

Բ. Ա. Նախասարգենի—7-7 1/2 ժ.

Գ. Մ. Մալախովսկի—քիմիական և խոշորացուց-

կան հետազոտութիւն մէջի, լիւի և արեան:

Վար 50 կ. չքաղցրեր ձիւի, շամպորդի (կոն-

սիլիումի) և օպիումային համար ստանձին:

Օ. Տ. Սալախիանի—տանը, ծաղկահատ և բժշ-

կական մարմնամարդ. դիմել 11-1 ժ.

Հիւանդանոցի վերահսկող:

79-150 Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՌՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ

ԲԺ. ՄԻՍԿՅՆԻ ԳԵԴԵՎԱՆՈՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի

կիրակի օրերէր:

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

Վ. Բ. Յանսովսկի—ստամոքսի հիւանդ. 8-10 ժ.

Գ. Մ. Մալախովսկի—ներքին հիւանդ. 9-10 ժ.

Ե. Տ. Սոնիկ—սկանչի, կոկորդի և քթի 5. ամեն օր

10 1/2-12 ժ.

ԵՏԻՄ ՊԱՆՈՎՈՎ ԳՆՈՒԹԵԼԻՆ—ներքին և երեկանների

5. ամեն օր 11-12, բացի շաբաթ օրերէր:

Ս. Ն. Շալիովսկի—աչքի 5.—12-1 ժ.

Ն. Տ. Ուրիսով—երեկանների 5. երկարաբերի և ուրբաթ

օր. 12-1 ժ.

Վ. Լ. Մարկովսկի—վերաբուժական 5. 12-1 ժ. և երե-

կայոց օր 3-4 ժ.

Բ. Գ. Բեքովսկի—վերականգնողական, մորթի և միզասեռ.

5. 1 1/2-2 ժ.

Մ. Ա. Գեդեվանով—ներքին և երկարաբերային,

1-2 ժ.

Ե Ր Ե Վ Ո Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Գեդեվանով—ներքին և երեկանների 5. (ծաղ-

կահատութիւն) 5-6 ժ.

Բ. Ն. Քոնստանտինով—կանանց և մանկաբուժական, 5-6 ժ.

Հիւանդանոցում գտնուող և մշտական մահճակալ-

ներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիա-

կան հետազոտութիւնների համար:

Վար խոշորի համար—50 կ. մնացած պայմանով:

Վիթիակովսկայ փողոց, Վորոնցովի արձանի հան-

դէպ, տ. Սաղիսովի, № 11

Հիւանդանոցի վերահսկող:

0-13 Թիֆլիսի Գեդեվանով

Լ Է Օ

Գ Լ Մ Ս Տ Ն

Գիւն է 80 40 ԳԵԿ

Կիւնի Թիֆլիս, Կոնտոր Սոցիետա Իզդա-

նիա Արմանսկի Ենից (Լորիսմելիցովսկայ

№ 11) կամ Tiflis (Russie) Société de la pub-

lication des livres Arméniens. Գրասենեակում

վաճառվում են ընկերութեան և այլ գրքերը:

Ցանկացողներին գրացուցակ ուղարկում է:

9-10

Վտերբուրգի բժշկական վարչութեան թոյլ-

տուութեամբ: Մեծ արկղիկը 5 րուբլի, փոք-

րը—3 ր. և 1 ր. 50 կ:

ՊԻՖԼԻՍԻՆԻՆ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամբարցնելու համար,

ոչնչացնում է թեփր: Գուրս է եկել նաև

բուրբուրի նոր միջոց

Ձ Ո Ւ Ի Կ Ա Թ Ը

երեսին ընթրութիւն և սպիտակութիւն տա-

լու համար, ոչնչացնում է արևի պատճա-

ռած սևութիւնը, մուսերը, տալիս է կա-

շուին ընթրութիւն և սպիտակութիւն: Այդ

գնեքը չափաւոր են. մեծ արտակը, արկղի-

կի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ.

Մասվում են բոլոր պարֆյումերական և

ղեղավաճառական խանութներում: Գլխա-

ւոր պահեստը գտնվում է Վտերբուրգում,

Պուշկինսկայ փողոց, տ. № 15, քնակա-

րան № 12. պահեստի բաժանմունքները

գտնվում են. թիֆլիսում կովկասեան դե-

ղատան ապրանքների վաճառման ընկերու-

թեան խանութում: Երեսնեան հրապարակ

և նրա բաժանմունքում, Միքայելեան փո-

ղոց և Բարու. նաև Միքայելեան կամուր-

ջի վրա, Կապովի և Արիստակովի դեղատ-

ներում: Օտարաբարձարացիների պատուէր-

ները կատարվում են անմիջապէս պատուով:

36-100

ՎՐԱՑ ԹԱՏՐՈՆ

Չորեքշաբթի, յունվարի 26-ին

Վրաց գրամատիքական խմբի անդամները, մա-

նակցութեամբ Վ. Ս. Ալեքսեյեւ-Մեխիլի

Գ. Վ. Գեդեվանովսկի և Բենեճիսի

կը ներկայացնեն

Ո Ւ Ր Ի Է Լ Ա Կ Օ Ս Ս Ա

Որը. 5 արարուածով, հեղ. Գուրկովի, Թարգմ.

Բարբաձէի:

Մասնակցում է ամբողջ խումբը:

2-2

Ներսիսեան դպրոցի ՄԻ ԱՇԱԿԵՐՏ, որ չքա-

ւորութեան պատճառով չէ կարողանում շա-

րունակել ուսումը, բարեգործների օգնութիւնն

է խնդրում: Հասցէն «Մշակի» խմբագրատանը:

1-3

ՄԱՆԿԱՐԱՆՈՒՅԻ ՄԱՍՍԵԹՍԱՍ

ՄՐՈՒՐԻ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԱՆ Գ Օ Լ Օ Շ Ե Ա Ն:

Հասցէն: Красногорская ул. № 14 14-20

Մ. 109538

КАПИЛЕРИНЪ

НОВОЕ

СОВЕРШЕННО

БЕЗВРЕДНОЕ

СРЕДСТВО

ВОСВРАЩАЕТЪ СЫДЫМЪ

ВОЛОСАМЪ

ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЪ

ЦѢНА 2 РУБ.

А.СІУИКО

М. 109538

Լ Է Օ

ՄԵԼԻԲԻ ԱՂԶԻԿԸ

պատճառով վեպ, 753 երես.

(Մնացել են սակաւթիւ օրինակներ)

Գինը 1 ՐՈՒՐԻ 30 40ԳԵԿ

Դիմել թիֆլիս, «Մշակի» խմբագրութեան:

5-10

ՆԻ ՏԱՃՎԱՍՏԱՆՅԻ ՀԱՅ

որ ըստ գիտէ պատրաստել հալիական կեր-

պութիւնը՝ ցանկանում է տեղ ունենալ: 3-3

ԴԵՊՈ ՅԵՐԱՄԻ ՍԵՐՄԻ

Դեղին և սպիտակ կոկոններից, հետեւեալ

ֆիրմաների

ԱԼՈՒՋԻ և ԸՆԿ., ԱԼՈՒՋԻ, ԲԵՐՏԵ և ԸՆԿ.,

ՖԵՐՐԱՆ:

Բոլոր սուրբերը հինգ-հինգ միսալանոց են,

բանդրոյով և կըքված թիֆլիսի չեքամապա-

հական կայարանի գնումի կիւրքով:

Ցանկացողները կարող են դիմել Օ. Գ. Բա-

րեկինսկանցին, Պակե ընկերութեան գործա-

կալին, Միսի փողոցի վրա, Մայսուրաձէի և

Նոջախարովի քարամասնարարում: 5-5

Մ. 59805

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆՆԱԿ

«Մ Ի Ջ Ն Ո Ր Դ»

(Посредникъ)

Գ. Ի. ԵՍԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պատած, Թամաշվիլի քարամա-

սարայի հանգչալ:

Մասվում են սներ, հողաբաժիններ՝ գործարան-

ներ շինելու համար, քաղաքում և քաղաքից

գուրս՝ դաւաններում: Ամարանոցներ, նաւթա-

յին հողեր: Մանրամասնութիւնների համար դի-

մել գրասենեակ:

№ 2. 0-6

Աննա Թագէտոսեանցը և Սրբուհի Սուրբազանցը արտի ցաւով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին առաջիկը իր սիրելի մօր, երկրորդը իր մեծ մօր

ՈՎԱՆՆԱՅ ՏԵՐ-ՅՈՎԱՍԷՓԵԱՆՅԻ

մահը: Յուզարկաւորութիւնը լինելու է յունվարի 27-ին, հինգշաբթի օր, ժամի 10-ին, դէպի Մոզնու եկեղեցին, իսկ հողեհանգիստը կը լինի յունվարի 28-ին, չորեքշաբթի օր, երեկոյեան ժամի 6-ին: Պոլիցէյսկայա փողոց, № 28/30. 1-2

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայնի Գանձաարի վանքի քարահանքից ամենաընտիր տեւակի ՎԱՐԱՐԱՎԻ

Ջ Բ Ա Վ Ա Յ Ա Ք Ա Ր Ե Ր

մատչելի գներով և զանազան մեծութեան:

Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.

Որովհետեւ վերջերս երևացել են նաև ուրիշ հանքերի բարեր, որոնք յատկութեամբ շատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմյան մեզ:

30-40 Գորահանքի կապալառու՝ Արքայաձ Հասան-Ջալալեանց

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италинская), 2) Комерческая ариометика, 3) Комерческая экономика, 4) Ариометика на счетахъ, 5) Торговля и вексельная законенія и 6) Комерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ января мѣсяца. 17-100

Годъ занятій десятиѣ.

За учебныя занятія благодарности. Преподав. ведется по собств. сочиненіямъ.

Եղբարք Ե. և Մ. Միրզաբեկեանցների

Ծ Խ Ե Լ Ո Տ Ի Գ Ո Ր Ծ Ե Ր Ա Ն

Բ Ա Գ Ի Ո Ւ Մ

Ի նկատ առնելով, որ տարեց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը գնալով մեծանում է՝ մենք, որպէսզի դիւրութիւն լինենք սուսած մեր մշտական գնողներին՝ վրձեւեղինք թիֆլիսում (Հալաբարի կամուրջի մօտ, տուն Բարայովի) բանալ սեփական խանութ, որտեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաընտիր տեսակները: Հրաւիրում ենք պ. պ. ծխողներին անձամբ հաւատարմաւ մեր ծխախոտի բարձր յատկութեան:

Օտարաբարձարացիք իրանց պատուէրներով դիմում են—Тифлисъ, Табачный магазинъ Бр. Мирзабековнхъ.

Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և շուտ: 10-10

Բժշկարար Կեֆիր և Կոռմիս

Օ. ԿՕՐՕՆԱ

Յողաբարձ Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և սորմանցած երկու մէկալ-նե րի՝ երկու ցուցանդէններում, բնախր կէֆիր և կուսիո պատրաստելու համար: Կարելի է ստանալ Օ. Կորոնայի գործարանում, Լորիս-Մէլիքեան փողոց, տուն Զորայովի և բաժանմունքում, Միքայելեան փողոց, օֆիցիւրների տնտեսական ընկերութեան խանութին կից:

Աւտոցիւրներին, սուսանոցներին և անտեսական ընկ. անդամներին կը լինի զիջում: Զիջում կուսենան և այն չքաղցրերը, որոնք կը ներկայայնեն բժշկից առանձին դեղատոմս: Ցանկացողներին՝ կէֆիր ու կուսիս կարելի է սուս ուղարկել: 26-50

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ

ШОКОЛАДЪ СІУ

42-52 М. 35,967

ФАБР. С.СІУИКО МОСКВА.

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

ԱՂԷՔ. ԽՈՒԻԴԱՎԵՐԻԵԱՆԻ

Գործիչնակի Գրայելեանի վրա, առաջին գիմնազիայի հանգչալ, տուն Գաշուկի սուրբ Գէորգ եկեղեցու:

Ստացել ենք մեծ բանակութեամբ աշնան այրին և ձմեր այրին սէզոնի համար՝

Տղանարդկանց և Երեխաների պատրաստի հագուստներ:

Ստացված է նոյնպէս ֆՕՐՄԷՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ.— դատաստանական, ուսուցչական և աշակերտական—կրտսիական և բնական սուսամարաններ: Ունենալով մեծ բանակութեամբ մատչելիներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ: Կները ՎԵՐՋՆԱՎԱՆ ԵՆ և անհամեմատ էման:

Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրը 1/4 մասը: 40-40

